4-րդ շաբաթ

Թեմա՝ «Իմ սիրելի բնակավայրը»

Ա. Ստորև տրված հարցերի օգնությամբ կառուցել 5-10 րոպե տևողությամբ բանավոր տեքստ և ներկայացնել այն լսարանին:

Հարցեր՝

1. Ո՞րն է ձեր սիրելի քաղաքը կամ գյուղը:
2. Ինչու՞ եք սիրում հատկապես այդ բնակավայրը:
3. Որտե՞ղ է այն գտնվում:
4. Ե՞րբ և ինչպե՞ս է այն հիմնադրվել:
5. Ի՞նչ պատմություն ունի:
6. Ովքե՞ր են ապրում այնտեղ, ի՞նչ բնակչություն ունի այն:
7. Ինչո՞վ են զբաղվում այնտեղի մարդիկ:
8. Ինչպիսի՞ բնություն ունի:
9. Ի՞նչ տեսարժան վայրեր կան:
10. Ի՞նչ ժամանցի վայրեր կան:
11. Ինչո՞վ է այն տարբերվում մյուս բոլոր բնակավայրերից:
12. Ի՞նչ թերություններ ունի այդ բնակավայրը:

***

Տեքստ կազմելիս ըստ ցանկության օգտվել առաջարկվող բառերից, բառակապակցություններից և այլ արտահայտություններից:

Կիրառելի բառեր և արտահայտություններ՝

գյուղ	ռեստորան
քաղաք	պատկերասրահ
գեղեցիկ բնություն	համալսարան
ծովափնյա	գործարան
անտառներ	հրապարակ
թատրոն	զբոսայգի
կինոթատրոն	փողոցներ
թանգարան	խանութ

***

Բ. Յուրաքանչյուր ուսանողի ներկայացրած տեքստի հիման վրա, այլ տեղեկություններ ստանալու կամ տրված տեղեկությունը ճշգրտելու նպատակով տալ և ստանալ լրացուցիչ հարցեր՝ երկխոսելով մյուս ուսանողների հետ:

Բնագրի նմուշ՝ 1

Իմ սիրելի գյուղը ՝ Մելիք գյուղը, տատիկիս և պապիկիս գյուղն է, որտեղ ես շատ հաճախ եմ լինում:

Մելիք գյուղը գտնվում է Արագածոտնի մարզում՝ Ծաղկունյանց լեռների գրկում, Ապարանից՝մոտ 20կմ հյուսիս-արևելք: Գյուղը ունի վաղեմի պատմություն, հիմնադրվել է 1826թ. , Մուշից և Ալաշկերտից գաղթած հայերի կողմից:

Գյուղը անվանվել է հիմնադրողի անունով (Մելիք): Նախկինում ունեցել է Մելիք, Մելիքի գյուղ, Մելիքյանդի, Մելիքենդ անվանումները: Մելիքգյուղ է վերանվանվել 1946 թվականին:

Ունի բարեխառն լեռնային կլիմա: Գյուղը շրջապատված է սարերով, որոնց վրա կա երկու փոքր մատուռներ ՝ Շողակաթ և Թուխ Մանուկ անունով:

Գյուղն ունի նաև Եկեղեցի՝ Սուրբ Հովհաննես անունով, որտեղ կատարվում են եկեղեցական բոլոր արարողությունները:

Գյուղում հոսում է գետակ, այն Քասախ գետի ակունքներից մեկն է: Գյուղը հարուստ է հանքերով, ունի ոսկու մարմարի հանքեր: Կառուցվել է գործարան, որտեղ մշակվում է ոսկի:

Բնակչության թիվը կազմում է 1153 մարդ: Ձմեռները երկար են և ցուրտ, ամառները՝ տաք, համեմատաբար խոնավ:

Աղբյուր՝ annaharutyunyan2006.wordpress.com/2016/09/13/իմ-սիրելի-գյուղը/